ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 03 դեկտեմբերի 2007 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին
դատական կազմը
Նախագահությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի և Ռ.. Պապայանի

Քննության առնելով «ՈՍԿԵ ՏԱԿԱՌ ԱԼԿՈ» ՍՊԸ-ի դիմումի ընդունելիության
հարցը

ՊԱՐԶԵՑ

«ՈՍԿԵ ՏԱԿԱՌ ԱԼԿՈ» ՍՊԸ դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով Սնանկության մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Գործում առկա է պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, Սահմանադարական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

«ՈՍԿԵ ՏԱԿԱՌ ԱԼԿՈ» ՍՊԸ-ի դիմումը՝ Սնանկության մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՐՏՈՒՂԵՐ
ՐՈՒԹՅՈՒՆ